Հայաստանի
Հանրապետություն
ք.Երևան
«Նորք - Մարաշ»
Բժշկական Կենտրոն ՓԲԸ

Республика
Армения
г.Ереван
Медицинский Центр
"Норк-Мараш" ЗАО

ՀՀ, ք. Երևան, Նորք
Ա. Արմենակյան 13
Հեռ. 650971; 650961
Ֆաքս (374 10) 65 38 69 կամ
65 0560

РА, г. Ереван, Норк
ул. А. Арменакяна 13
Тел: 65 09 71; 65 09 61
Факс: (374 10) 65 38 69
или 65 05 60

29.08.2016թ. No 08-295

<<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի
պետ՝ պարոն Մ. Անանյանին

Հարգելի պարոն Անանյան

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-80/16 որոշման պահանջների կատարման մասին որպես տեղեկատվություն կից Ձեզ ենք տրամադրում ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 12 նիստի արձանագրության պատճենը:

Առդիր 2 թերթ

Կենտրոնի տնօրեն՝ Լ.Կ.Մուրադյան

Արձանագրություն N12

ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18 ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան, 25.08. 2016թ

ժամը՝ 14.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Նազարյան,

Հանձնաժողովի անդամ՝ Կ. Վարդանյան,

Հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Ղամբյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Ա.Մկրտչյանը.

Հանձնաժողովի նիստը վարեց նախագահ՝ Ի. Նազարյանը

---

1. Ընդունել ի գիտություն, որ 24.08.2016թ գնումների աջակցման կենտրոնից ստացվել է <<Խաչպար>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը, համաձայն որի բողոքը բավարարվել է մասնակի: Գնահատող հանձնաժողովը որոշեց ուսումնասիրել բողոքարկման խորհրդի ուսումնասիրած նյութերը և որոշումը, իրականացնել դրանից բխող գործառույթները:

Ընդունվել է որոշում՝ կողմ -2, դեմ - 0:

2. Ուսումնասիրելով բողոքարկման խորհրդի որոշումը հանձնաժողովը որոշեց ուշադրություն հրավիրել հետևյալ հատկանշական փաստերի վրա.

ա/ Բողոքարկման ընթացքում գնումների աջակցման կենտրոնը դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն ընթացակարգի թիվ 2, 50, 51, 52, 53 և 54-րդ չափաբաժիններով նախատեսված և առաջարկված ապրանքների կիրառման ոլորտի և նպատակի, ախտահանման սպեկտրի համարժեքության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու համար, բարձրացնելով նաև ախտահանիչ միջոցների տեխնիկական բնութագրերով, տվյալ միջոցից ստացվող՝ միևնույն նպատակներով օգտագործվող աշխատանքային լուծույթի խտությունը որպես ելակետային չափանիշ ընդունելու հարցը:

բ/ ՀՀ առողջապահության նախարարության պատասխան նամակում նշվել էր, որ <<սանիտարահակահամաճարակային հսկողության ենթակա ապրանքները, ունենալով մանրէասպան, սնկասպան, վիրուսասպան հատկություն, պարունակում են որոշակի ազդող նյութեր, կոնկրետ չափաբաժիններով և եթե դրանք նույնն են, ապա այդ ախտահանիչ միջոցները համարժեք են, այլ ոչ թե փոխադարձ փոխարինելի>> Սակայն գրության հետ կից համեմատականում ներկայացված ապրանքների ոչ ազդող նյութերի և ոչ էլ դրանց չափաբաժինների համեմատություն չի կատարվել, չի դիտարկել տվյալ միջոցից ստացվող՝ միևնույն նպատակներով օգտագործվող աշխատանքային լուծույթի խտությունը որպես ելակետային չափանիշ այլ միայն համեմատվել են կիրառման ոլորտը, նպատակը և ախտահանման սպեկտրը: Արդյունքում տարբեր ազդող նյութեր և դրանց չափաբաժիններ ունեցող ապրանքները որակվել են որպես միմյանց համարժեք: Պատվիրատուն նշված բացթողումը ուղղելու նպատակով դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն, սակայն բողոքի քննման գործընթացի ժամկետը սահմանափակ լինելու, ինչպես նաև բողոքի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության այլ եզրակացություն չունենալու պատճառով բողոքը քննող հանձնաժողովը որոշման հիմքում դիտարկել է միայն առկա թերի եզրակացությունը:

գ/ <<Դեղերի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված են օրենքում գործող հիմնական հասկացությունները համաձայն որի.

<<ա) դեղ՝ կենսաբանական ակտիվությամբ օժտված կշռաչափված միջոց, որն ստացվել է մեկ կամ մի քանի դեղանյութերի և օժանդակ նյութերի հիման վրա, ունի ստանդարտ բաղադրություն, անփոփոխ անվանում, անհրաժեշտ դեղաչափ, դեղաձև և ձևավորում: Այն նախատեսվում է մարդու և կենդանու հիվանդությունների բուժման, ախտորոշման, կանխարգելման, անզգայացման, հղիության կանխման համար, ազդում է օրգանիզմի ֆունկցիաների վրա.

Դեղեր են համարվում նաև՝

հականեխիչ միջոցները (անտիսեպտիկներ)՝ վարակիչ և մակաբուծային հիվանդությունների հարուցիչները, ինչպես նաև դրանց փոխանցողներին ոչնչացնող կամ վերացնող միջոցները,

վարակազերծիչ միջոցները՝ հակամանրէային ակտիվությամբ օժտված նյութերը, որոնք օգտագործվում են բժշկական նշանակության առարկաների վարակազերծման համար>>

դ/ ՀՀ կառավարության 02.05.2013թ թիվ 502-Ն որոշմամբ հաստատվել են ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները: Նշված որոշման ընդհանուր բովանդակությունը և բուն նպատակը հստակ ապացուցում է այն փաստը, որ դեղերը համեմատելիս պետք է համեմատվեն ազդող նյութերը և դրանց չափաբաժինները:

ե/ ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջների համաձայն բողոքարկման խորհրդի որոշումը իրավապարտադիր է: Այն կարող է բողոքարկվել դատական կարգով:

զ/ << այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերով ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով.>>

Հիմք ընդունելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց կատարել բողոքարկման խորհրդի որոշումը և չեղյալ է համարել 27.06.16թ նիստի թիվ 4 արձանագրության 3 կետով՝ 2, 50, 51 և 53-րդ չափաբաժինների մասով <<Խաչպար>> ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը և դրանից բխող հետագա բոլոր որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ -2, դեմ - 0:

3. Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի - 2, 50, 51 և 53-րդ չափաբաժիններով հաղթող ճանաչել << Խաչպար>> ՍՊԸ-ին, սակայն տեղեկացնել ընտրված մասնակցին, որ Պատվիրատուի կողմից ապրանքների համարժեքության վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարության պատասխան նամակի արդյունքներով մինչև պայմանագրի կնքումը կարող է վերանայել հաղթողի ընտրության վերաբերյալ կայացրած որոշումը, իսկ պայմանագիր կնքված լինելու դեպքում կարող է կիրառվել սույն արձանագրության 2-րդ կետի զ/ պարբերությամբ ներկայացված օրենսդրական դրույթը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -2, դեմ - 0:

4. Հանձնաժողովը որոշեց հաստատել 2, 50, 51 և 53-րդ չափաբաժիններով պայմանագրեր կնքելու մասին նոր որոշման տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -2, դեմ – 0:

5. Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի արդյունքների ամփոփման նիստը հրավիրել պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող օրը ժամը 9:30-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -2, դեմ – 0:

6. Հանձնաժողովի քարտուղարին ապահովել ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված և սույն նիստին ընդունված որոշումներից բխող բոլոր գործողությունները և տեղեկատվության հրապարակումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -2, դեմ – 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի. | | |
| Նախագահող՝ | | Ի. Նազարյան |
| Անդամ՝ | | Կ. Վարդանյան |
| Քարտուղար | | Կ. Ղրամբյան |